† ՄԱՀԳՈՅԺ

—

1. ՆԻԼՍ ՖԻՆԶԷՆ

Անցեալ սեպտեմբերին Կոպենհագենում վախճանուեց պրոֆէսոր Նիլս Ֆինզէնը, որ մի շատ կարևոր դիւտ է արել բժշկականութեան մէջ, ինչպէս արդէն մենք իւր ժամանակին էլ ասել ենք թերթիս էջերում։ Նա դտաւ լուսաբուժութեան եղանակը։

Ֆինզէնը իւր ուսումը ստացել է Դանիայում և իսլանական թուականներին նա հիմնեց Կոպենհագէնում բժշկական մի հաստատութիւն — «Medyzynste—Lys-Institut»։

Ի նկատի ունենալով, որ արևի լոյսը սպանում է մանրէները և մարդկային հիւսուածքների վերայ ազդելու յատկութիւն ունի, նա սկսեց փորձեր անել՝ կաշուի հիւանդութիւնները բժշկելու ելեքտրական լուսով։ Եւ այդպիսով իւր բազմադիմի փորձերից յետոյ նա դտաւ, թէ ինչ տեսակ լոյսի ճառագայթներ բուժիչ ընդունակութիւն ունին և ինչ եղանակով պէտք է նոցա գործադրել. և պատրաստեց ֆինզէնեան կոչուած գործիքը, որ հասցրեց վերին աստիճանի կատարելագործութեան։ Մեր հանդիսի ընթերցողները գիտեն, որ ֆինզէնեան գործիքը յաջողութեամբ օգնում է մանաւանդ լուպուսի դէմ, այն է կաշուի տուբերկուլեօզեան հիւանդութեան դէպքում, որ սովորաբար այլանդակում է մարդու կերպարանքը։

Նա մեծ ժողովրդականութիւն ստացաւ գիտական աշխարհում, նորա մօտ ամեն կողմից գալիս էին բազմաթիւ հիւանդներ, որոնց օգնում էր ամեն կերպ։ Վերջին տարիներս նա ստացաւ նոբելեան մրցանակը — 80,000 ռուբլի, որից 10,000-ը նա գործ դրեց իւր հիւանդների վերայ։

Մարդկութեան այս մեծ բարեկամը մեռաւ անժամանակ՝ 44 տարեկան հասակում սրտի ծանր հիւանդութիւնից։

2. ՅԱԿՈՎԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Հոկտեմբերի 20-ին Թիֆլիսում վախճանուեցաւ 56 տա-